

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՑ»
(իմաստուն ասույթներ քարոզների համար)

Հայ միջնադարյան մատենագրության մեջ առանձին սեռ են կազմում «Վկայութիւնք» անունը կրող ժողովածուները, որոնք ստեղծվել ու կիրարկվել են գլխավորապես դավանաբանական նպատակներով: Դրանց մեջ կան և այնպիսիք, որոնցում տեղ են գտել նաև ոչ դավանաբանական բնույթի վկայություններ, ասույթներ, խորհրդածություններ: Այս բնույթի «Վկայութիւնք» իրենց բովանդակությամբ մերձ են նշանավոր «Բանք իմաստնոց» ժողովածուների հետ: Պետք է ենթադրել, որ «Բանք»-երը, ստեղծված լինելով շատ ավելի կանուխ, ուղեցույց են հանդիսացել «Վկայութիւնք»-ների համար: Ինչպես «Բանք իմաստնոց» ժողովածուներում, այնպես էլ «Վկայութիւնք»-ներում տեղ են գտել ոչ միայն եկեղեցու հայրերի, այլև անտիկ շրջանի նշանավոր մտածողների իմաստասիրական ասույթներն ու բարոյական հրահանգները: Մասնավորապես «Վկայութիւնք»-ները ունեցել են միանգամայն գործնական նշանակություն. դրանցում առկա ասույթներն ու իմաստախոսությունները կիրառվել են քարոզներում՝ խոսքն առավել դիպուկ և ներգործուն դարձնելու նպատակով:

Հոգեշեն ասույթների մի այդպիսի ժողովածու է կազմել ԺԷ—ԺԸ դդ. նշանավոր հեղինակ Ալեքսանդր Ջուղայեցին: Նա «եղել է Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ 1697—1706 թթ., ապա, Նահապետ Եդեսացու մահից հետո՝ Էջմիածնի կաթողիկոս 1706—1714 թթ.»[1]: Ալեքսանդր Ջուղայեցին Հայ Առաքելական եկեղեցու դավանական սկզբունքների փութեռանդ պաշտպանն ու ջատագովն էր. նա երկարատև ու համառ պայքար է մղել կաթոլիկ եկեղեցու գործակալների՝ լատին միսիոնարների քարոզչության դեմ, և պարսից Հուսեին շահի հրովարտակի օգնությամբ հալածել է նրանց Հայաստանի սահմաններից[2]: Թողել է մատենագրական հարուստ ժառանգություն[3], որի մեջ իր առավել գործնական բնույթով ուրույն տեղ է

[1] Տե՛ս **Հ. Ս. Անասյան,** Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երևան, 1959, էջ 578:

[2] **Հր. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Ա. Երևան, 1942, էջ 108:

[3] Հեղինակի երկերի մատենագիտությունը տե՛ս **Հ. Անասյան,** նշվ. աշխ., էջ 578—595:

զբաղեցնում նրա կազմած «Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք ի պատրաստ գոլոյ ի ձեռս խնդրողաց Բանի, եթէ ի պէտս քարոզութեան և թէ ի պէտս վիճաբանութեան մանաւանդ ի պէտս գիտութեան» խորագրով ասույթների ժողովածուն[4]: Սրան կցված հեղինակի հիշատակարանից իմանում ենք, որ «զայս սակաւ գրքուկ, զոր տեսանէք, որք են վկայութիւնք պիտանիք և պատմութիւնք վայելուչք, զոր ոչ գտանի յամենայն տեղիս, յոլով տաժանմամբ ընթերցայ զգրեանս բազումս և ի նոցունց հաւաքեցի զյոյժ պիտանին և զճահաւորագոյն հարկաւորն, և գրեցի զսա մեղսաներկ բազկաւ իմով և տխեղծ մատամբ և ընձեռեալ ընծայեցի ձեզ սիրեցելոց իմոց եղբարցդ բանասիրաց, որք փափագող էք բանի և իմաստութեան...: Բայց զայս գիտասջիք, զի զվեց ամ աշխատեցաք ի վերայ սորա՝ բազում աշխարհ շրջելով միանգամայն և զվանորայս յոլովս, և յամենայն տեղոջ անծանօթ գրեանս ընթեռնլով, և ի նոցունց զկարևոր սևտանին առնլով այսքան ժողովեցաք, զոր տեսանէք: Եղև կատարումն սորայ ի թուականութեանս Հայոց ՌՃԻԶ (1677) ի Շօշ քաղաքի և ի վանս Ջուղայոյ յառաջնորդութեան յայսմ նահանգի հոգևոր ծնողի և արփիաւորչի իմոյ տեառն Դաւթի քաջ և արի աստուածաբան վարդապետի և արքեպիսկոպոսի, որոյ ի Տեառնէ վարձատրութիւն եղիցի. ամէն»[5]: Ուրեմն՝ ասույթների ժողովածուն հեղինակը կազմել է վեց տարում. սկսել է 1671-ին և ավարտել 1677 թ. Շոշ, այն է՝ Սպահան քաղաքում: Ասույթներում տեղ են գտել քաղվածքներ ա) Սուրբ Գրքից (Բ Օրէնք ԺԶ 19, Ելք ԻԳ 3, Ղևտ. ԺԹ 32—ԻԶ 27, Ա Թագ. Բ 30—ԺԶ 7, Բ Թագ. ԺԲ 21, Բ Մակ. Զ 16, Յովբ. Ա 21—Դ 14, Իմաստ. Ա 3, Ժող. Ա 1—Ժ 14, Եսայի Ա 2, Միք. Է 5, Աբդիու 4—16, Հռովմ. Ա 20, Յայտ. Ա 7 և այլն), բ) Անտիկ մտածողների իմաստախոսություններից և գ) Եկեղեցու հայրերի զանազան խորհրդածություններից: Հասկանալի պատճառով զանց ենք առնում **ա** բաժնում զետեղված ասույթների հրապարակումը: Զանց ենք առնում նաև Եվագր Պոնտացու անվամբ բերված վկայությունների հրապարակումը: Այդ վկայությունները ոչ այլ ինչ են, քան մեծանուն ճգնակյացի ասույթների կրճատ տարբերակները[6]:

«Վկայութիւնք»-ը հրապարակում ենք ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1984 (16ա—32բ, 43ա—45ա) ձեռագրի: Ստորև տալիս ենք ձեռագրիս նկարագրությունը: Ձեռագիրը ժողովածու է և ընդօրինակված 1682 թ.: **Գրիչ՝** Աստվածատուր ժամարար (հավանաբար Ալեքսանդր Ջուղայեցու աշակերտ): **Թերթ՝** 241: **Պրակ՝** Ա—ԻԱ×12 (ԻԱ 1)+1×1: **Նիւթ՝** թուղթ, (լուսագծերով՝ 192—241): **Մեծութիւն՝** 19×13: **Գրութիւն՝** միասիւն: **Գիր՝** նստրգիր: **Տող՝** 25: **Կազմ՝** դրոշմազարդ, շագանակագոյն կաշի: **Բովանդակություն՝**

Ա, 2ա—45ա **[Աղէքսանդրի Ջուղայեցւոյ ժողովեալ] վկայութիւնք պիտանիք և հարկաւորք ի պատրաստ գոլոյ ի ձեռս խնդրողաց բանի, եթէ ի պէտս քարոզութեան և թէ ի պէտս վիճաբանութեան, մանաւանդ ի պէտս գիտութեան**

Բ. 46ա—8ա **Տաղ վասն ոգէվարին ի տէր Աղէքսանդրէ**—Վայ իմ օր հոգէվարին...

Գ. 49ա—88բ **[Վկայութիւնք ի գրոց վարդապետաց]**

---

[4] Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1984, թ. 2ա—45ա:

[5] Անդ, թ. 45աբ:

[6] Տե՛ս «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք...», աշխատ. Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ 26 և շար.:

Դ. 89ա—114բ **[Աղէքսանդրի Ջուղայեցւոյ Հակաճառութիւն ընդդէմ ազգին Ֆռանկաց]**

Տե՛ս տպ. «Գիրք որ կոչի Ատենական վիճաբանութիւն արարեալ տեառնըն Աղէքսանդրու սրբազան կաթողիկոսի Ջուղայեցւոյ...», Կ. Պոլիս 1783:

Ե. 115ա—62բ **Սիմէոնի վարդապետի Ջուղայեցւոյ աբարեալ Քերականութիւն ըստ լեզուի մերում հայկազանց**

Զ. 163ա—240բ **Սիմէոնի վարդապետի Ջուղայեցւոյ աբարեալ զՏրամաբանութեան հաւաքումն**

«Վկայութիւնք»-ից օգտվողների գործը դյուրացնելու նպատակով վերջում կցել ենք Առարկայական ցանկ:

[ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՅ ԺՈՂՈՎԵԱԼ] ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՊԻՏԱՆԻՔ ԵՒ ՀԱՐԿԱՒՈՐՔ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ

1. **Ոսկեբերան ասացեալ.** Առանց բարկութեան ոչ վարդապետութիւն առաջանայ, ոչ դատաստանք կայանան և ոչ մոլութիւնք ուանձահարին:

2. Արդարն՝ բարկութիւնն է մայր ամենայն խրատու, քանզի անբան համբերութիւն սերմանէ զմոլորութիւնս:

2. ա. Որ տենչմամբ երկնայնոցն ըմբռնի, ոչ բնակի մերձ հովանոցիս այս:

3. Ի մէջ ամենայն պատուոց մեծագոյն է քահանայականն, որ ոք անարատ պահեսցէ զնա:

4. Համբերե առ ժամանակ մի թշնամւոյն քո և բարի արա նմա, և յաղթեսցես նմա քաղցրութեամբ:

5. Աշխարհս է վաճառ պատրանաց ուր ամենայն ինչ վաճառեալ լինին. ի սմա գնօղք և վաճառողք ստութեամբ վարեն զկեանս իւրեանց: Արդ, փախիր յաշխարհէ զի մի պատրեսցես կամ պատրեսցիս:

6. Լաւագոյն է յայտնի թշնամին քան զկերպարանեալ սիրելին, քանզի երկնչելովն՝ ի թշնամեաց խորշին, և ոչ ճանաչելովն զկերպարանեալ սիրելին՝ պատրին:

7. Որպէս հիւանդութիւն պատրաստէ զմարմինն ի մահ, սոյնպէս չարութիւն մեղացն պատրաստէ զհոգին ի մահ գեհենոյն:

8. Որդին Աստուծոյ չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ, զոր եթող մեզ գանձն. կամեցաւ մեռանիլ Որդին Աստուծոյ, զի հաշտեցուսցէ զմեզ ընդ յԱստուծոյ Հօր:

9. Ես դառնագոյն կսկիծ քան զգեհենն համարիմ զմերժիլն ի տեսութենէն Քրիստոսի:

10. **Բարսղի ասացեալ.** Թէ ոք ի վերայ մեռելոյն կոծաւ և արիւն հանէ՝ կոծադիրն և կոծողն նզովեալ եղիցին գինի ի լալիս մեռելոց մի ըմպեսցեն և աշխար ի վերայ մի արասցեն, և թէ արասցեն՝ պարտական լիցին ապաշխարութեան արտաքոյ եկեղեցւոյ:

11. Բարկութիւն յարուցանէ թշնամացս և թշնամանք ծնանին զկռիւ, իսկ կռիւն՝ զհարուածս և հարուածք՝ զվէրս, իսկ ի վիրացն՝ բազում անգամ զմահք:

12. **Գրիգոր Նազի[անզ]ացի ասէ,** Աստուած խաչեցաւ՝ երկիր շարժեցաւ:

13. Որ զկոյսն Աստուածածին ոչ խոստովանի, հեռի է Աստուածութենէն:

14. Եթէ ոք խաչելոյն երկիր ոչ պագանէ ընդ աստուածասպանսն կար-

Աղեքսանդր Ջուղայեցու հավաքած պիտանի և հարկավոր վկայությունները, որպեսզի ընտրողների համար պատրաստ լինեն թե՛ քարոզչության, թե՛ վիճաբանության և մանավանդ իմացության կարիքների համար:

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՍՎԱԾ

1. Առանց խստության ո՛չ վարդապետությունը առաջ կգնա, ո՛չ դատաստանները կկայանան, ո՛չ էլ մոլորությունները կսանձահարվեն:

2. Իսկապես խստությունն է մայրը բոլոր խրատների, որովհետև անբան համբերությունը մոլորություններ է սերմանում:

2. ա. Ով բռնված է երկնայինների տենչով, չի բնակվի այս ամպհովանու մոտ:

3. Բոլոր պատիվներից մեծագույնը քահանայական պատիվն է, եթե մեկը անարատ պահի այն:

4. Որոշ ժամանակ համբերիր քո թշնամու [արարքներին] և բարիք արա նրան, և կհաղթես նրան քաղցրությամբ:

5. Աշխարհը խաբեությունների վաճառանոց է, ուր վաճառվում է ամեն ինչ, նրա մեջ գնողներն ու ծախողները ստությամբ են վարում իրենց կյանքը: Արդ, փախիր աշխարհից, որպեսզի չխաբես կամ չխաբվես:

6. Հայտնի թշնամին ավելի լավ է դիմակավոր սիրելուց, որովհետև վախենալով՝ խորշում են թշնամուց, իսկ չճանաչելով դիմակավոր սիրելուն՝ խաբվում են:

7. Ինչպես հիվանդությունը մահվան է պատրաստում մարմինը, այսպես էլ մեղքերի չարությունը հոգին է պատրաստում դժոխքի մահվան:

8. Աստուծո որդին չարչարվեց, խաչվեց, թաղվեց, դա թողեց մեզ իբրև գանձ, Աստուծո որդին կամեցավ մեռնել, որպեսզի մեզ հաշտեցնի Հայր Աստուծո հետ:

9. Քրիստոսին տեսնելուց մերժվելը ես ավելի դառն կսկիծ եմ համարում, քան դժոխքը:

ԲԱՐՍԵՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՍՎԱԾ

10. Եթե մեկը կոծում է մեռածի վրա և արյուն է հանում, կոծ դնողն ու կոծողը նզովյալ կլինեն, մեռելների վրա լալիս գինի թող չխմեն և ողբ ու կոծ չանեն, և եթե անեն, պարտավոր են ապաշխարել եկեղեցուց դուրս:

11. Բարկությունը թշնամանք է հարուցում, և թշնամանքը կռիվ է ծնում, իսկ կռիվը՝ հարվածներ, և հարվածները՝ վերքեր, իսկ վերքերից շատ անգամ մահեր են լինում:

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑԻՆ ԱՍՈՒՄ Է

12. Աստված խաչվեց՝ երկիրը շարժվեց:

13. Ով որ կույսին Աստվածածին չի ընդունում, հեռու է Աստվածությունից:

14. Եթե մեկը խաչյալին չի երկրպագում՝ մարդասպանների շարքին է դասվում, որովհետև ով որ չի ասում «խաչված Աստված», Աստծուն՝ կույսից ծնված, և կույսին՝ Աստվածածին չի խոստովանում:

գեսցի, քանզի որ ոչ ասէ «Աստուած խաչեալ» ոչ խոստովանի զԱստուած ի կուսէն ծնեալ և ոչ զկոյսն Աստուածածին:

15. **Գրիգոր Սքանչելագործն,** Որ ոք ասէ՝ Այլ ոք ախտակրեալն է և այլ ոք ոչ ախտակրեալն, և ոչ խոստովանեսցի զնոյն ախտակիրն Աստուածն Բան մարմնովն ախտակրեալն, նզովեալ եղիցի:

16. **Մեծն Աթանաս.** Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ և ոչ երկու բնութիւն կամ երկատեսակ կամ կրկնապատիկ: Յաղագս որոյ մոլորինն որք ասենն, թէ՝ Այլ ոմն է, որ չարչարեցաւ և այլ ոմն, որ ոչ չարչարեցաւ: Բայց ոչ այլ ոք էր քան զԲանն որ չարչարեցաւ և զմահ ընկալաւ:

18. **Ամբրոսիոս.** Որ անարժանութեամբ առնու զՔրիստոս՝ այնպէս որպէս թէ սպանանէ զնա:

19. Յորժամ փորն լիանայ բարեաւ մնալ ասէ ամենայն առաքինութեանց:

20. Գեղեցկութիւն կուսանացն Քրիստոսի է ոչ զարդարել զինքն մարմնական զգեստիւք, զի այն է գեղեցիկ կոյս առաջի Աստուծոյ, որ ջանայ երևիլ մարդկան ոչ գեղեցիկ, այլ՝ անարգ:

21. Ստեղծման աշխարհի՝ յԱստուծոյ, գործ աշխարհիս՝ ի սատանայէ: Կացուցումն իշխանութեանց՝ յԱստուծոյ, իսկ պատուասիրութիւն նոցա՝ ի սատանայէ:

22. Կամեցաւ Տէրն մատնիլ յաշակերտէն իւրմէ, զի դու մատնեալդ և թաղեալդ յընկերէն քումմէ համբերութեամբ տարցես:

23. Ոչ կարոտանայր Տէրն օգնականութեանց աղօթից. այլ մեզ տայր օրինակ հետևիլ ինքեան:

24. Ոչ է առաքինութիւն սկսանելն, այլ՝ **կատարելն:**

25. **Օգոստինոս ասէ.** Աշխարհս այս է պանդխտութիւն և ճանապարհ անցից յայլ կեանք, և ամենեքեան, որք արժանի եղեն յաւիտենական կենացն, և որք լինելոց են, ծանեան զինքեանս նշդեհս և պանդուխտս և ոչ՝ քաղաքացիս:

26. Սէր աշխարհիս և սէր Աստուծոյ ոչ կարեն համաբնակիլ ի միում սրտի, զոր օրինակ նոյն աչք ոչ կարեն համանգամայն հայել զերկինն և զերկիր:

27. Հեշտութիւն աշխարհիս ունի ճշմարիտ սրտմութիւն և սուտ զուրախութիւն, խստագոյն զաշխատանս և զերկիւղալի զհանգիստն, կեղծաւորեալ զերանութիւն և իսկապէս թշուառութիւն:

28. Հպարտութիւն է յօժարութիւն թիւր գերազանցութեան:

29. Զանկողինս իւր եթող Տէրն աշակերտաց իւրոց. որ ոք կամի հանգչիլ ընդ նմա յերկինս, ընկողմեսցի ի վերայ անկողնոյն այն, այսինքն՝ յերկրի մեռցի:

30. Որչափ ոք խոստովանեսցի բազմաց զգարշութիւն մեղաց իւրոց այնչափ ընկալցի զշնորհս թողութեան:

31. Որպէս բարձունքն փութով ցամաքին, և հովիտքն ջրալիր լինին, այնպէս և շնորհքն ի բաց հանին հպարտիցն և տուեալ լինին խոնարհաց:

32. Ոչ ինչ նմանութիւն գործոցն սատանայի քան զոխակալութիւն և զբանակռիւն լինել:

33. Յոյժ յիմարութիւն է երթալ անդ, ուր զբազումս անկեալ տեսանէ:

34. Նախանձն է իբրև զցեց հոգոյն, որ ուտէ զգայարանս, տոչորէ զսիրտս, նեղէ զմիտս իբրև զչար ժանդ, ապականէ զամենայն բարութիւն մարդոյն:

ԳՐԻԳՈՐ ԱՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ

15. Ով որ ասում է «Այլ մեկն է ախտակիրը և այլ մեկը՝ ոչ ախտակիրը և նույն ախտակրին չի ընդունում որպես ախտակիր մարմնով Աստված Բան, նզովյալ լինի:

ՄԵԾ ԱԹԱՆԱՍԸ

16. Մեկ է մարմնացած Բանի բնությունը և ոչ թե երկու բնություն, կամ երկտեսակ կամ կրկնապատիկ: Այդ պատճառով էլ մոլորվում են նրանք, որ ասում են, թե «Այլ մեկն է, որ չարչարվեց, և այլ մեկը՝ որ չչարչարվեց: Բայց ոչ այլ ոք էր, քան Բանը, որ չարչարվեց և մահ ընդունեց:

ԱՄԲՐՈՍԻՈՍ

18. Նա, ով անարժանաբար է ընդունում Քրիստոսին, կարծես սպանում է նրան:

19. Երբ փորը լիանում է, «մնաս բարով» է ասում բոլոր առաքինություններին:

20. Քրիստոսին հետևող կույսերի գեղեցկությունն է՝ չզարդարել ինքնիրեն մարմնական զգեստներով, որովհետև Աստծո առաջ գեղեցիկ է այն կույսը, որ ջանում է մարդկանց երևալ ոչ թե գեղեցիկ, այլ՝ անարգ:

21. Աշխարհի ստեղծումը Աստծուց է, այս աշխարհի գործը՝ սատանայից: Իշխանությունների հաստատումը Աստծուց է, իսկ նրանց փառասիրությունը՝ սատանայից:

22. Տերը կամեցավ մատնվել իր աշակերտից, որպեսզի դու, որ քո ընկերոջ կողմից մատնվեցիր և թաղվեցիր, համբերությամբ տանես:

23. Տերը աղոթքի օգնության կարիքը չուներ, այլ մեզ օրինակ էր տալիս՝ իրեն հետևելու:

24. Առաքինությունը սկսելը չէ, այլ ավարտելը:

ՕԳՈՍՏԻՆՈՍԸ ԱՍՈՒՄ Է

25. Այս աշխարհը պանդխտություն է և ճանապարհ՝ անցնելու այլ կյանք, և բոլոր նրանք, որոնք արժանացան հավիտենական կյանքին, և որոնք արժանի պիտի լինեն, իրենք իրենց ճանաչեցին որպես նշդեհներ և պանդուխտներ և ոչ թե քաղաքացիներ:

26. Աշխարհի սերը և Աստծո սերը չեն կարող համատեղ բնակվել մի սրտում, ինչպես որ նույն աչքերը չեն կարող միաժամանակ նայել երկինք ու երկիր:

27. Այս աշխարհի հեշտ կյանքի տրտմությունը ճշմարիտ է և ուրախությունը՝ սուտ, աշխատանքը՝ ծանր, և հանգիստը՝ երկյուղալի, երջանկությունը կեղծ է և թշվառությունը՝ իսկական:

28. Հպարտությունը թյուր գերազանցության ընդունումն է:

29. Տերը իր անկողինը թողեց իր աշակերտներին: Ով որ ուզում է հանգչել նրա հետ երկնքում, պետք է պառկի այդ անկողնու վրա, այսինքն մեռնի երկրում:

35. Մի դներ ունկն բամբասողին առ ի յընդունել զբամբասանս նորա, զի մի յղասցիս զմահն ի հոգի քո, վասն զի կերակուր մահու է բամբասանքն:

36. Սէրն է ծանրագոյն հնար ընդդէմ նախանձուն:

37. Հպարտութիւն բառնայ ի մարդոյն զԱստուած, նախանձն՝ զընկերն և բարկութիւն՝ զինքն իսկ:

38. Որպէս քացախն ապականէ զամանն. եթէ երկար մնասցէ անդ, նոյնպէս բարկութիւն՝ զսիրտն, թէ մնասցէ մինչ ի վաղիւն:

39. Մեղքն, եթէ մեծ և եթէ փոքր, անպատիժ լինել ոչ կարեն:

40. Աշխատութիւն երկեցուցանէ, բայց տես զվարձն:

41. Երկոքին սէր մարդկան շինեն զերկու քաղաքս. սէրն Աստուծ շինէ զվերինն Երուսաղէմ, և սէր[ն] աշխարհիս շինէ զբաբիլոն դըժոխոց:

42. Զի է զի զամենայն ինչ կամիս բարի և զքեզ ոչ բարի, աղաչեմ զքեզ նախ մեծարեա զքեզ քան զքոյսն. ցաւիս ընդ կորուստ դանկի միոջ և ոչ ցաւիս ընդ կորուստ հոգոյն:

43. Ոչ այլ ինչ է ներկա ժամանակս, բայց միայն ընթացք առ մահն:

44. Դիւրեաւ քամահէ զաշխարհս, որ միշտ ի միտ ածէ զօր մահուն իւրոյ:

45. Յոյժ փարթամ է քրիստոնէական կրօնքս, վասն զի ստանայ զըստացողն ամենայնի, այսինքն՝ զՔրիստոս:

46. Առաջի մարդկան սիրտն դատի բանիւն և առաջի Աստծո բանն դատի սրտիւն:

47. Յետորոյ իմացայ գնեալ զիս պատուական արեամբն Քրիստոսի, այլ ոչ կամեցայ առնել զիս վաճառելի:

48. Այսոքիկ են, զոր համարեմ ձեզ պահել, որ բնակեալդ էք ի վանս նախ զի համակամ բնակեսջիք, վասն որոյ իսկդ էք ի միասին, և մի անուանէք ձեզ յատուկ իր:

49. Ոչ է պարտ երկնիլ ի տալն, քանզի ոչ դադարէ Աստուած դարձեալ պարգևել, յորժամ զառեալն բաշխեսցուք:

50. Զար է մեղանչելն, չարագոյն յարամնալն և ևս չարագոյն ջատագով լինելն:

(Շարունակելի)

30. Ինչքան մարդ շատերին խոստովանի իր գարշելի մեղքերը, այնքան թողության շնորհներ կստանա:

31. Ինչպես որ արագ չորանում են բարձունքները և հովիտները ջրով են լցվում, այդպես էլ շնորհները առնվում են հպարտներից և տրվում են խոնարհներին:

32. Ոչինչ այնպես նման չէ սատանայի գործերին, ինչպես ոխակալությունն ու լեզվակռիվը:

33. Մեծ հիմարություն է գնալ այնտեղ, ուր շատերին ընկած է տեսնում:

34. Նախանձը նման է հոգու ցեցի, որ ուտում է զգայարանները, այրում է սրտերը, չար ժանդի պես նեղում է մտքերը, ապականում է մարդու բոլոր բարությունները:

35. Ականջ մի դնիր բամբասողին՝ ընդունելու նրա բամբասանքները, որպեսզի մահ չծնեն քո հոգում, քանի որ բամբասանքը մահվան կերակուր է:

36. Սերը մեծագույն ուժն է նախանձի դեմ:

37. Հպարտությունը մարդու միջից հանում է Աստծուն, նախանձը հանում է ընկերոջը, իսկ բարկությունը՝ հենց իրեն:

38. Ինչպես որ քացախն է ապականում ամանը, եթե երկար մնա այնտեղ, այդպես էլ բարկությունը կապականի սիրտը, եթե մնա մինչև վաղը:

39. Մեղքերը, մեծ թե փոքր, անպատիժ լինել չեն կարող:

40. Աշխատանքը հոգնեցնում է, սակայն որոշիչը վարձն է:

41. Մարդկանց երկու սերերը երկու քաղաքներ են շինում, Աստծու սերը շինում է վերին Երուսաղեմը, իսկ աշխարհի սերը շինում է դժոխային բաբելոնը:

42. Ինչպես է, որ ամեն ինչ բարի ես ուզում, իսկ քեզ՝ ոչ: Խնդրում եմ քեզ՝ նախ մեծարիր քեզ, քան քո ունեցածները, ցավում ես մի կոպեկի կորստի համար, սակայն չես ցավում հոգու կորստի համար:

43. Ոչ այլ ինչ է ներկա ժամանակը, եթե ոչ միայն ընթացք դեպի մահ:

44. Հեշտ է արհամարհում աշխարհը նա, ով միշտ մտաբերում է իր մահվան օրը:

45. Հույժ հարուստ է մեր քրիստոնեական կրոնը, որովհետև ստանում է բոլորի ստացողին, այսինքն՝ Քրիստոսին:

46. Մարդկանց մոտ սիրտն է դատվում խոսքով, իսկ Աստծո մոտ խոսքն է դատվում սրտով:

47. Իմանալուց հետո, որ գնվել եմ Քրիստոսի պատվական արյամբ, այլևս չուզեցի վաճառելի դառնալ:

48. Սրանք են, որ գտնում եմ, թե պետք է պահեք, դուք որ բնակվում եք վանքերում, նախ որ համերաշխ ապրեք, քանի որ ճշմարիտ եք միասին, և ձեզ հատուկ մի համարեք:

49. Պետք չէ տառապել տալու ժամանակ, քանի որ Աստված չի դադարի նորից պարգևել, երբ առնվազը բաշխենք:

50. Չար է մեղանչելը, ավելի չար է այդպես մնալը և առավել ևս չար է պաշտպան կանգնելը:

(Շարունակելի)